

մասին համաձայն մինչև 1659 եպիսկոպոս էր Ֆահրապատու, իսկ 1659-էն վերջ «Արքեպիսկոպոս Նախջականայ եւ առաջնորդ վանաց եւ վիճակին Երևանայ Սրբոյն Կարապետին:» Այս հակասութիւնը նոյն տապանազրին մէջ եղած է որովհետեւ տապանազրին շարադրողը չէ ըմբռնած ըսուածին կարեւորութիւնը եւ չէ խորհած որ Առաքելի կողմէ յիշուած այս եկեղեցական պաշտօնները ոչ միայն դոյութիւն չունին այլ ատոնք սրտայօղ կերպով ստեղծուած են Առաքելի իսկ կողմէ՝ ինքզինքին եկեղեցական վարկ մը, դիրք մը տուած ըլլալու համար: Մենք աւելի վերջը պիտի ցոյց տանք որ այդ պաշտօնները դոյութիւն չունէին:

Տապանազրին համաձայն Առաքել 1659-ին Հոռոմ եկած է կ'ըսուի ուր ընդունած է հոռոմէադաւանութիւնը: Ոչ միայն տեղեկութիւն կը պակսի 1653—1659 չըջանի իր կեանքին եւ գործունէութեան վրայ, այլ տեղեկութիւն չըզտայ Հաւատոյ Տարածման Ժողովոյն Դիւանին մէջ անոր Հոռոմ դալուն մասին: Տեղեկութիւն չունիմ նաեւ 1659-էն մինչև 1667 թուական Առաքելի մասին: 1667-ին զինքը յիշուած կը գտնենք «Արքեպիսկոպոս Երեւանի:»

Ըսինք թէ բոլորովին մտացածին եւ ստապատում են իր տիպոսները: Եպիսկոպոս Ֆահրապատու դոյութիւն չունի այլ կայ պատուակալ արքեպիսկոպոսութիւն: Չէր կրնար Նախիջևանի «արքեպիսկոպոս» ըլլալ Լուսաւորչական հատուածին, քանի որ Նախիջևանի մէջ Լուսաւորչականները միայն եպիսկոպոսութիւն ունէին: Հոռոմէադաւաններ արդարեւ ունէին արքեպիսկոպոսութիւն, որուն գահին վրայ Առաքել չենք գտներ: Ահա զաւաղանազիր մը:

Բիրոճալի մինչև 1668:

Յրա Մատթէոս Յովհաննէս Մայիս 14 1668-էն մինչև 1674:

Յրա Մատթէոս Յովհաննէսի մահւնէն (1674) մինչև Օդոստոս 14, 1681 աթուր թափուր մնաց: Այդ ատեն ընտրուեցաւ Յրա Սեպասդիան Նարի:

Գալով «Երեւանի Արքեպիսկոպոս» կոչումին, Լուսաւորչական Արքեպիս-

կոպոսներուն շարքին եւս չենք գտներ զինքը: Իսկ հոռոմէադաւանները հոն Արքեպիսկոպոսութիւն կամ Եպիսկոպոսութիւն չունէին: Պէտք է խորհիլ որ Առաքելի այս տիպոսն ալ մտացածին է եւ սուտ: Կ'երեւի թէ զոնէ 1667-էն սկսելով Երեւանի մէջ հոռոմէադաւանական քարոզչութեամբ զբաղած է: Այս մասին կ'օգտուինք Հաւատոյ Տարածման Ժողովոյն Դիւանին, ուր արձանագրեալ կը գտնենք. «Գերապայծառ Առաքել, բարձրութեան ներկայացնելու համար Հայ արքեպիսկոպոսը, Հոռոմ եկած է ձեր որ, Երեւանի մէջ եկեղեցի մը չինած ըլլալով օգնութեամբ Հայ հոռոմէադաւան Աղարեայի հետ (անձ մը որ լաւ ծանօթ է Սրբազան Ժողովոյն) ուր Կարուչին քարոզչները պիտի պաշտօնավարէին, Պարսկաստանի թագաւորին պաշտօնեաներուն կողմէ քանդուած է (եկեղեցին) Հայ հերձուածողներու (լուսաւորչականներու) զրգամարը, եւ արքեպիսկոպոսը վտարուած ու զրկուած է իր հասոյթէն: Ան կ'աղաչէ Նորին Սրբութեանէն յանձնարարական մը Պարսկաստանի Շահին որպէսզի իրեն տրուի թոյլատուութիւն Երեւանի մէջ նոր եկեղեցի մը կառուցանելու համար... եւ հրաման որ իրեն վերադարձուի քաղաքին Ս. Գրիգոր եկեղեցւոյն հասոյթը...» (*)

Ս. Գրիգոր եկեղեցի մը անծանօթ է ինծի Երեւանի մէջ:

Գալով հոռոմէադաւաններու եկեղեցւոյն ի Երեւան քանդումին մասին Հ. Ալիշան տարբեր բան կը պատմէ: «Հ. Գարբիէլ Շինոն վեղարաւոր միանձն, որ ամս յոլովս քարոզեալ էր ի Հայս, կառոյց անդ (Երեւան) եկեղեցի մի սատարութեամբ Չէլէպի Աղարեայի ուրումն մեծատան, այլ միաբանք էջմիածնի ի ձեռն խանին ետուն փակել զայն, եւ ըզ-Շինոն խոշտանդեցին, որ եւ յետ սակաւ աւուրց մեռաւ (1668) եւ թաղեցաւ ի դերեղմանս վարդապետաց Հայոց, յորոյ վերայ հաւատարիմք նորին (Շինոնի) գրեցին արձան հայերէն այսպէս՝ իտալատառիւք, ըստ աւանդելոյ մեզ միոյ

(.) A Chronicle of the Carmelites in Persia, 1939, Ա. հատար էջ 412: